ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս - էջ 2
2. Հապավումներ - էջ 4
3. Ամփոփագիր - էջ 6
4. Հաշվեքննության հիմնական արդյունքներ - էջ 13
5. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ - էջ 14
6. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ - էջ 17
7. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր - էջ 21
8. Հետհսկողական գործընթաց - էջ 24
9. Առաջարկություններ - էջ 26

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի մայիսի 11-ի թիվ 128-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:
Հաշվեքննության առարկան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշում, ՀՀ վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1984-Ա որոշում, ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1503-Ն որոշում, ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 1-ի թիվ 297–Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1330-Ն որոշում և այլն:
Հաշվեքննությունն	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի

ընդգրկող ժամանակաշրջանը	մարտի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի մայիսի 15-ից մինչև հուլիսի 30-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ հուլիսի 30-ի թիվ 132–Լ որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույց»-ի համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

1. **Նախարարություն** – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

2. **Ծրագիր 1** – (1045-12003) «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագիր:

3. **Ծրագիր 2** – (1045-120034) «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագիր:

3. **Ծրագիր 3** – (1111-12003) «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագիր:

4. **Ծրագիր 4** – (1115-12001) «Աջակցություն երիտասարդ ընտանիքներին» («Երիտասարդ ընտանիքներին մատչելի բնակարաններ» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորում) ծրագիր:

5. **Ծրագիր 5** – (1146-12003) «Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն» (Պարտադիր կրթության երրորդ մակարդակում սովորողների ընդգրկվածության, գրագիտության և համակողմանի զարգացման բարձր մակարդակի ապահովում) ծրագիր:

6. **Ծրագիր 6** – (1146-11011) «Հիմնական մասնագիտացված հանրակրթություն» (Հիմնական կրթության մակարդակում մասնագիտացված հանրակրթական ծառայությունների մատուցման միջոցով սովորողների ընդգրկվածության և գրագիտության ապահովում) ծրագիր:

7. **Ծրագիր 7** – (1168 - 11001) «Արվեստների ծրագիր» (Օպերային և բալետային ներկայացումներ) (Օպերային և բալետային արվեստի ներկայացումների բեմադրություն, թատրոնի գործունեության ապահովում, ազգային օպերային և բալետային արվեստի խթանում) ծրագիր:

8. **Ծրագիր 8** – (1168 - 11003) «Արվեստների ծրագիր» (Թատերական ներկայացումներ) (Թատերական ներկայացումների բեմադրություններ և թատրոնների գործունեության ապահավում) ծրագիր:

9. **Ծրագիր 9** – (1168 - 11004) «Արվեստների ծրագիր» (Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ) (Երաժշտական, պարային, համերգային կազմակերպությունների գործունեության ապահովում և համերգային ծրագրերի իրականացում) ծրագիր:

10. **Ծրագիր 10** – (1192 - 32002) «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավման ծրագիր» (Կապիտալ ներդրումներ ավագ,

միջնակարգ և հիմնական դպրոցներում և կրթության ոլորտի կազմակերպություններում) /ԿՏԱԿ/» ծրագիր:

11. **ԾՐԱԳՐԵՐ** - **Ծրագիր 1-ից Ծրագիր 10-ը** ներառյալ:

12. **ԱԱՀ** – Ավելացված արժեքի հարկ:

13. **ԿԲ** – ՀՀ Կենտրոնական բանկ:

14. **ԾԻԳ** - «Կրթական ծրագրերի կենտրոն» Ծրագրի իրականացման գրասենյակ:

3. Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում 2021թ. երեք ամիսների պլանի և ճշտված պլանի միջև տարբերությունները կազմել են -77,507.5 հազ. դրամ, որոնք վերաբերում են Նախարարության Ծրագիր 4-ին (-98,709.9 հազ. դրամ) և Ծրագիր 5-ին (+21,202.4 հազ. դրամ) և հիմնավորված են ՀՀ կառավարության որոշումներով (տես՝ Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. երեք ամիսների պլանի և ճշտված պլանի տարբերությունների հիմնավորումների

(հազ. դրամ)

2021թ. երեք ամիսներ				
թիվ	Պլան	Վերաբաշխում (+,-)	Ճշտված պլան	Հիմնավորումներ
Ծրագիր 4				
1	400,225.0	-98.709.9	301,515.1	*ՀՀ կառավարության 18.02.2021թ. թիվ 143-Ն որոշում*
Ընդամենը՝		*-98.709.9*		
Ծրագիր 5				
2	1,617,031.3	-6,820.3	1,638,233.7	*ՀՀ կառավարության 18.03.2021թ. թիվ 353-Ն որոշում*
Ընդամենը՝		*+ 21,202.4*		
Ամբողջը՝		- 77,507.5		

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ–ում (բացառությամբ՝ Ծրագիր 3-ի, Ծրագիր 4-ի և Ծրագիր 9-ի) 2021թ. երեք ամիսների ճշտված պլանի և ֆինանսավորման միջև տարբերությունները կազմել են - 1,069,823.3 հազ. դրամ: Թերֆինանսավորման պատճառները կապված են մի շարք հանգամանքների հետ (տես՝ Աղյուսակ 2):

Նախարարության Ծրագիր 10-ում 2021թ. երեք ամիսների ճշտված պլանի և ֆինանսավորման միջև առաջացած - 494,720.9 հազ. դրամ տարբերությունը ունի հետևյալ պարզաբանումը.

ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված 123,680,2 հազ. դրամը բաշխված է միայն համաֆինանսավորման միջոցների մասով, իսկ հաշվետու ժամանակաշրջանի պլանը՝ ըստ վարկային և համաֆինանսավորման միջոցների հանրագումարի: Ցուցանիշների համադրելիությունն ապահովելու համար անհրաժեշտ է ֆինանսավորման մեջ ներառել նաև վարկային միջոցների ֆինանսավորման

ցուցանիշը, որը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 506,885.8 հազ. դրամ: Արդյունքում, ֆինանսավորման հանրագումարը երկու ֆինանսավորման միջոցներից 2021թ.-ի երեք ամիսների ընթացքում կազմել է ընդամենը 630,566.0 հազ. դրամ (123,680.2 + 506,885.8): 2021թ-ի երեք ամիսների ճշտված պլանի և ֆինանսավորման իրական տարբերությունը կազմել է - 12,164.9 հազ. դրամ (630,566.0 - 618,401.1): Նշված տարբերությունը պայմանավորված է վարկային միջոցների ֆինանսավորման առանձնահատկությամբ, որը հատկացվում է նախորդ ժամանակաշրջանի փաստացի վճարումների հիման վրա:

Աղյուսակ 2

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում ճշտված պլանի նկատմամբ թերֆինանսավորման պատճառների

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2021 թ. երեք ամիսներ			Թերֆինանսավորման պատճառներ
		Ճշտված պլան	Ֆինան-սավորում	*Թերֆինան-սավորում*	
1	Ծրագիր 1	**607,639.4**	**525,905.5**	*81,733.5*	Տարբերությունը պայմանավորված է նպաստ ստացող ուսանողների փաստացի թվով, ինչպես նաև եռամսյա ծրագրավորման ավել նախատեսմամբ:
2	Ծրագիր 2	**1,879,490.9**	**1,443,842.0**	*435,648.9*	Տարբերությունը պայմանավորված է նպաստ ստացող ուսանողների փաստացի թվով:
3	Ծրագիր 5	**1,638,031.3**	**1,630,101.0**	*8,132.7*	Տարբերությունը պայմանավորված է սովորողների փաստացի թվով և այն հանգամանքով, որ եռամսյա պլանավորումն ավել է նախատեսվել:
4	Ծրագիր 6	**362,096.6**	**333,240.4**	*28,856.2*	Տարբերությունը պայմանավորված է սովորողների փաստացի թվով:
5	Ծրագիր 7	**369,484.3**	**357,484.3**	*12,000.0*	Վճարման համապատասխան հայտը ներկայացվել է հաշվետու ժամանակաշրջանի վերջում, իսկ վճարումը կատարվել է ապրիլի սկզբին:
6	Ծրագիր 8	**459,973.7**	**451,242.6**	*8,731.1*	«Խորեգրաֆիայի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի հետ Նախարարությունը պայմանագիր չի կնքել:
7	Ծրագիր 10	**618,401.1**	**123,680.2**	*494,720.9*	Թերֆինանսավորման բացատրությունը տրված է ստորև:

Ընդամենը՝	**5,935,319.7**	**4,865,496.1**	*1,069,823.3*	

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ–ից թվով 2-ում (Ծրագիր 8 և Ծրագիր 10) 2021թ. երեք ամիսների ֆինանսավորման և դրամարկղային ծախսի միջև տարբերությունները ընդամենը կազմել են + 351,307.8 հազ. դրամ, ընդ որում Ծրագիր 8-ում - 2,221.9 հազ. դրամ, իսկ Ծրագիր 10-ում՝ + 353,529.7 հազ. դրամ: Պատճառները պայմանավորված են ներքոհիշյալ հանգամանքների հետ (տես՝ Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Նախարարության Ծրագիր 8-ում և Ծրագիր 10-ում ֆինանսավորման և դրամարկղային ծախսի տարբերության պատճառների

(հազ. դրամ)

Թիվ	**Ծրագրեր**	2021թ. երեք ամիսներ			Տարբերության պատճառները
		Ֆինան-սավորում	Դրամարկ-ղային ծախս	*Տարբերություն (+, -)*	
1	**Ծրագիր 8**	451,242.6	449,020.7	**- 2,221.9**	Պայմանավորված է «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից գումարների, այդ թվում՝ ԱԱՀ-ի գումարների ետ վերադարձով:
5	**Ծրագիր 10**	123,680.2	477,209.9	**+ 353,529.7**	Տարբերության բացատրությունը տրված է ստորև:
Ընդամենը՝		**574,922.8**	**926, 230,6**	**+ 351,307.8**	

Նախարարության Ծրագիր 10-ում 2021թ. երեք ամիսների ֆինանսավորման և դրամարկղային ծախսի 353,529.7 հազ. դրամի տարբերությունը պայմանավորված է նրանով, որ իրական դրամարկղային ծախսը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 474,883.0 հազ. դրամ, որից վարկային միջոցներից 379,906.4 հազ. դրամ, համաֆինանսավորման միջոցներից՝ 94,976.6 հազ. դրամ: 2,326.9 հազ. դրամ տարբերությունը (477,209.9 - 474,883.0) պայմանավորված է այն հանգամանքով, որ 2021թ. մարտի 1-ից հետո ԾԻԳ-ին պատկանող արտարժութային թիվ 900000900317 և թիվ 900000900325 հաշիվներից ելքագրվող իրական դրամային գումարները փոխարկվել են արտարժույթի ԿԲ-ի կողմից սահմանված առքի փոխարժեքով, իսկ 0754900000900317 և 0754900000900325 ՀՀ Գանձապետական համակարգում արտաժութային գումարները դրամով արտացոլման հաշիվներում հաշվառվել են ԿԲ-ի կողմից նույն օրվա համար սահմանված վաճառքի փոխարժեքներով:

Վերոնշյալի արդյունքում 2021թ. առաջին եռամսյակի ավարտին ֆինանսավորման և դրամարկղային ծախսի իրական տարբերությունը կազմել է +155,683.0 հազ. դրամ (630,566.0 - 474,883.0):

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում 2021թ. երեք ամիսների դրամարկղային և փաստացի ծախսերի միջև ընդհանուր տարբերությունը կազմել է 802,009.9 հազ. դրամ, ընդ որում թվով 2 ծրագրերում (Ծրագիր 4 և Ծրագիր 9) դրամարկղային ծախսերը գերազանցել են փաստացի ծախսերին (ընդամենը՝ 121,188.7 հազ. դրամ), իսկ մնացած թվով 8 ծրագրերում (Ծրագիր 1, Ծրագիր 2, Ծրագիր 3, Ծրագիր 5, Ծրագիր 6, Ծրագիր 7, Ծրագիր 8 և Ծրագիր 10) փաստացի ծախսերն են գերազանցել դրամարկղային ծախսերին (ընդամենը՝ 923,198.6 հազ. դրամ):

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում 2021թ. երեք ամիսների փաստացի և դրամարկղային ծախսերի տարբերությունները, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերի աճերի, նվազումների համամասնությունները պայմանավորված են՝

1. Դեբիտորական պարտքերի գծով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, դրամական միջոցների մնացորդների և պահեստում ապրանքանյութական պաշարների առկայությամբ, արձակուրդային գումարների վճարներով, ինչպես նաև տարվա սկզբի դեբիտորական պարտքի մարմամբ և 2020թ. դեկտեմբեր ամսվա կոմունալ վճարներով:

2. Կրեդիտորական պարտքերի գծով 2021թ. մարտ ամսվա հաշվարկված, բայց 2021թ. ապրիլին վճարված կոմունալ ծախսերի, ինչպես նաև աշխատավարձերի, արձակուրդային վճարների և կրեդիտորական պարտքերի մարմամբ:

Կրեդիտորական պարտքերի (տարեսկիզբ և առաջին եռամսյակի ավարտ) ցուցանիշները ներկայացված են միայն համաֆինանսավորման մասով՝ համապատասխանաբար 42,012.6 հազ. դրամ և 56,569.1 հազ. դրամ: Վարկային միջոցների համապատասխան ցուցանիշները տարեսկզբին կազմել են 168,050.4 հազ. դրամ, իսկ եռամսյակի ավարտին՝ 226,276.5 հազ. դրամ: Արդյունքում տարբերությունը վարկային և համաֆինանսավորման միջոցների հանրագումարի մասով եռամսյակի ավարտին կազմել է ընդամենը +72,782.7 հազ. դրամ ((56,569.1 + 226,276.6) - (42,012.6 + 168,050.4)): Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին կրեդիտորական պարտքի ավելացումը պայմանավորված է հետևյալով.

1) կապալառուների կողմից ներկայացրած յուրաքանչյուր կատարողական ակտի գումարից շարունակվել են պահվել 5%-ի չափով երաշխիքային գումարներ՝ մինչև հիմնանորոգման աշխատանքների վերջնական ավարտը:

2) Հաշվետու ժանամակաշրջանի ավարտին առկա են եղել կատարված աշխատանքների դիմաց չվճարած գումարներ, որոնց վճարումները իրականացվել են հաջորդ ապրիլ ամսվա ընթացքում:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում (բացի Ծրագիր 10-ը) 2021թ. երեք ամիսների դրամարկղային և փաստացի ծախսերի, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոփոխությունների համամասնությունների, տարբերությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում դրամարկղային և փաստացի ծախսերի, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոփոխությունների համամասնությունների, տարբերությունների վերաբերյալ

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2021թ. երեք ամիսներ						
		Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Տարբերություն (+, -)	Դեբիտորա-կան պարտքերի աճ, նվազում (+, -)	Կրեդիտո-րական պարտքերի աճ, նվազում (+, -)	Բացարձակ շեղում (+, -)	Սյունակ 8 – Սյունակ 5 (+, -)
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
1	Ծրագիր 4	301,515.1	243,145.0	- 58,370.1	+ 58,370.1	0,0	+58,370.1	*0,0*
2	Ծրագիր 9	695,096.6	632,278.0	- 62,818.6	+ 70,871.6	+ 8,053.0	+62,818.6	*0,0*
Ընդամենը՝		**996,611.7**	**875,423.0**	**- 121,188.7**	**+ 129,241.7**	**+ 8,053.0**	**+121,188.7**	***0,0***
3	Ծրագիր 1	**525,905.9**	**551,597.7**	+ 25,691.8	+ 51,731.8	+ 77,423.5	- 25,691.8	*0,0*

4	Ծրագիր 2	**1,443,842.0**	**1,615,891.4**	+ 172,049.4	+ 25,823.5	+ 197,872.9	- 172,049.4	*0,0*
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
5	Ծրագիր 3	**1,833,996.6**	**1,913,200.0**	+ 79,233.4	+ 121,485.9	+ 37,036.4	- 91,940.6	*+12,707.2*
6	Ծրագիր 5	**1,630,101.0**	**2,059,170.8**	+ 429,069.8	-119,735.5	309,334.2	- 429,069.8	*0,0*
7	Ծրագիր 6	**333,240.4**	**354,482.6**	+ 21,242.2	+ 61,205.1	+ 82,447.2	- 21,242.2	*0,0*
8	Ծրագիր 7	**357,484.3**	**401,922.5**	+ 44,438.2	+ 82,868.5	+ 127,306.7	- 44,438.2	*0,0*
9	Ծրագիր 8	**449,020.7**	**473,676.8**	+ 24,656.1	+ 66,581.7	+55,521.1	- 24,656.1	*0,0*
Ընդամենը՝		6,573,560.9	7,369,941.8	+ 796,380.9	+ 77,854.1	+ 886,942.1	- 809,088.0	***+12,707.2***
Ամբողջը՝ *(առանց Ծրագիր 10-ի)*		7,570,172.6	8,245,364.8	+ 675,192.2	**+ 207,095.8**	**+ 894,955.1**	**- 687,899.3**	***+12,707.2***
10	Ծրագիր 8	**477,209.9**	**604,027.6**	+ 126,817.7	**- 11,272.4**	**+14,556.5**	- 25,828.9	***+ 100,988.8***

Ընդամենը ԾՐԱԳՐԵՐ	8,047,382.5	8,849,392.4	+ 802,009.9	**+ 195,823.4**	**+ 909,511.6**	**- 713,688.2**	***+ 88,281.7***

Նախարարության Ծրագիր 10-ում 2021թ. առաջին եռամսյակի ավարտին փաստացի և դրամարկղային ծախսերի իրական տարբերությունը կազմել է 129,144.6 հազ. դրամ (604,027.6 - 474,883.0)՝ ներառյալ 2,326.9 հազ. դրամի ֆինանսավորման և դրամարկղային ծախսի ցուցանիշների միջև տարբերության հանգամանքը:

Փաստացի ծախսի և դրամարկղային ծախսի տարբերությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

1) Համաձայն կապալառուների հետ կնքված պայմանագրերի հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների կատարողական ակտերից համամասնորեն մարվել են 2020թ. փոխանցված կանխավճարային գումարները, ինչպես նաև կապալառուների կողմից ներկայացրած յուրաքանչյուր կատարողական ակտի գումարից պահվել է երաշխիքային գումար 5%-ի չափով մինչև հիմնանորոգման աշխատանքների վերջնական ավարտը՝ 2021թ. սեպտեմբեր ամիսը:

2) Հաշվետու ժանամակաշրջանի ավարտին առկա են կատարված աշխատանքների դիմաց չվճարած գումարներ, որոնց վճարումները իրականացվել են հաջորդ ամսվա ընթացքում:

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Նախարարությունից պահանջվել է ամբողջական տեղեկատվության տրամադրում, որի ուսումնասիրությամբ, ինչպես նաև օգտվելով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային («LSFINANCE» և «LSREP») համակարգերի շտեմարաններից և հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացվել է բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար:

Հաշվի է առնվել այն հանգամանքը, ըստ որի 2021թ. ՀՀ պետական բյուջեի երեք ամիսների հաշվեքննության իրականացման համար որպես ռիսկային է դիտարկվել նախատեսված ծրագրերի և միջոցառումների մասով հաշվետու ժամանակահատվածի բյուջեի կատարողականի թերակատարումների և բյուջեի կատարողականի վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացրած հաշվետվություններում բերված ցուցանիշներում փաստացի կատարվածի իրական ծավալները մասնակի ընդգրկելու, իսկ որոշ դեպքերում՝ առհասարակ չներառելու խնդիրները:

Նախարարության 2021 թվականի ՀՀ պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ իրականացված հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, իսկ հայտնաբերված խեղաթյուրումները համատարած չեն ու հաշվեքննության առարկային վերաբերող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի շրջանակներում 2021թ. տարեկան ընդհանուր պլանը կազմել է 38,112,817.0 հազ. դրամ, ճշտված տարեկան պլանը 38,225,206.0 հազ. դրամ, տարբերությունը՝ 112,389.0 հազ. դրամը, հիմնավորված է ՀՀ կառավարության որոշումներով 307,611.0 հազ. դրամ նվազեցումներով (Ծրագիր 2-ում 300,000.0 հազ. դրամով և Ծրագիր 4-ում՝ 7,611.0 հազ. դրամով) և վերադասի կողմից սահմանված կարգով վերաբաշխման միջոցով ավելացմամբ 120,000.0 հազ. դրամ (Ծրագիր 5):

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. երեք ամիսների պլանը կազմել է 8,843,437.5 հազ. դրամ, իսկ ճշտված տարեկան պլանը 8,765,930.0 հազ. դրամ, տարբերությունը՝ - 77,507.5 հազ. դրամը, հիմնավորված է ՀՀ կառավարության որոշումներով 98,709.9 հազ. դրամ նվազեցումներով (Ծրագիր 4) և վերադասի կողմից սահմանված կարգով վերաբաշխման միջոցով ավելացմամբ 21,202.4 հազ. դրամ (Ծրագիր 5):

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. երեք ամիսների ընդհանուր ֆինանսավորումը կազմել է 7,696,074.7 հազ. դրամ, դրամակղային ծախսը՝ 8,047,382.5 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 8,849,392.4հազ. դրամ:

Նախարարության և ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. տարեկան և երեք ամիսների ֆինանսական ամփոփ ցուցանշները տրված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Նախարարության և ԾՐԱԳՐԵՐ-ի 2021 թվականի երեք ամիսների ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազ. դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսա-վորման անվանումը, *(ծածկագիրը)*	**2021թ. տարեկան սահման**	Փոփոխու-թյուններ տարեկան պլանում		**2021թ. տարեկան**	2021թ. երեք ամիսներ					*Կատարման տոկոսը*	
		ՀՀ կառավ	Վերադասի		**2021թ. առաջին**	Փոփոխություն-ներ առաջին եռամսյակի պլանում	**2021թ. առաջին**	Փաստաց-ի	Դրամարկ-ային	Փաստաց-ի ծախս	Տարեկան ճշտված	Հաշվետու ժաման-

						ՀՀ կառավարության կողմից (+, -)	Վերադասի կողմից (+, -)						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Նախարա-ություն *(104010)*	**74,230,901.6**	-1,155,781.8	-1,037.0	**73,074,082.8**	**16,000,953.6**	446.1	-1,037.0	**16,000,362.7**	13,056,702.9	13,393,877.9	14,924,368.0	***18,3***	***83,7***
Ծրագիր 1	**2,430,557.6**	--	--	**2,430,557.6**	**607,639.4**	--	--	**607,639.4**	525,905.9	525,905.9	551,597.7	***21.6***	***86.5***
Ծրագիր 2	**7,517,963.6**	-7,611.0	--	**7,510,352.6**	**1,879,490.9**	--	--	**1,879,490.9**	1,443,842.0	1,443,842.0	1,615,891.4	***19.2***	***76.8***
Ծրագիր 3	**9,453,600.8**	--	--	**9,453,600.8**	**1,833,998.6**	--	--	**1,833,998.6**	1,833,966.6	1,833,966.6	1,913,200.0	***19.4***	***100.0***
Ծրագիր 4	**1,600,900.0**	-300,000.0	--	**1,300,900.0**	**400,225.0**	-98,709.9	--	**301,515.1**	301,515.1	301,515.1	243,145.0	***23.2***	***100.0***
Ծրագիր 5	**8,085,156.6**	--	120,000.0	**8,205,156.6**	**1,617,031.3**	--	21,202.4	**1,638,233.7**	1,630,101.0	1,630,101.0	2,059,170.8	***19.9***	***99.5***
Ծրագիր 6	**1,810,483.2**	--	--	**1,810,483.2**	**362,096.6**	--	--	**362,096.6**	333,240.4	333,240.4	354,482.6	***19.9***	***99.5***

Ծրագիր 7	**1,439,533.1**	--	--	**1,439,533.1**	**369,484.3**	--	--	**369,484.3**	357,484.3	357,484.3	401,922.5	***18.4***	***92.0***
Ծրագիր 8	**1,784,733.0**	--	--	**1,784,733.0**	**459,973.7**	--	--	**459,973.7**	451,242.6	449,020.7	473,676.8	***25.2***	***97.6***
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*
Ծրագիր 9	**2,770,649.5**	--	--	**2,770,649.5**	**695,096.6**	--	--	**695,096.6**	695,096.6	695,096.6	632,278.0	***25.1***	***100.0***
Ծրագիր 10	**2,820,139.6**	--	--	**2,820,139.6**	**618,401.1**	--	--	**618,401.1**	123,680.2	477,209.9	604,027.6	***16.9***	***77.2***
Ընդամենը՝ ԾՐԱԳՐԵՐ	**38,112,817.0**	**-307,611.0**	**120,000.0**	**38,225,206.0**	**8,843,437.5**	**-98,709.9**	**21,202.4**	**8,765,930.0**	**7,696,074.7**	**8,047,382.5**	**8,849,392.4**	***20,1***	***87.8***

6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

6.1 Նախարարության Ծրագիր 7–ի 2021թ. երեք ամիսների հաշվեքննության շրջանակներում ուսումնասիրվել է «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում իրականացվել են գնումների գործընթացները, ըստ որոնց կատարվել են «Գնանշման հարցում» ընթացակարգով 36 չափաբաժիններով՝ 20,887.196 հազ. դրամ գումարի չափով և «Մեկ անձից գնում» գնման ընթացակարգով 158 չափաբաժիններով՝ 7,659.970 հազ. դրամ գումարի չափով գնումներ: Գնումների գործընթացի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ.

6.1.1 «Գնանշման հարցում» ընթացակարգով, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/01, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/02, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/03, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/04, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/05, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/06 ծածկագրերով կատարված գնման ընթացքում հրավերի տեքստը, գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու և կնքված պայմանագրի մասին հայտարարությունները «Procurement.am» տեղեկագրում (այսուհետ՝ Տեղեկագիր) չեն հրապարակվել նաև ռուսերեն լեզվով: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «…ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/01, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/02, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/03, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/04, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/05, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/06 ծածկագրերով բոլոր փաստաթղթերը «gnumner@.am» էլեկտրոնային հասցեին ուղարկվել են նաև ռուսերեն լեզվով:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրվել է բացատրություն:

6.1.2 «Գնանշման հարցում» ընթացակարգով, ՕԲԹ-ԳՀԱՊՁԲ-21/02 ծածկագրով կատարված գնման ընթացքում Տեղեկագրում չի հրապարակվել «Կնքված պայմանագրի մասին» հայտարարությունը: Առկա է անհամապատասխանություն 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

6.1.3 «Գնանշման հարցում» ընթացակարգով, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/01, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/02 ծածկագրերով կատարված գնման ընթացքում Տեղեկագրում «Կնքված պայմանագրի մասին» հայտարարություններն հրապարակվել են ուշացումով: Առկա է անհամապատասխանություն 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «6.1.2 և 6.1.3 ենթակետերի վերաբերյալ հայտնում ենք, որ թերության պատճառը գնումների մասնագետի կորոնովիրուսով վարակվելու հետևանքով առաջացած առողջական խնդիրներ են եղել:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրվել է բացատրություն:

6.1.4 «Գնանշման հարցում» ընթացակարգով, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/01, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/02, ՕԲԹ-ԳՀԾՁԲ-21/04 ծածկագրերով կատարված գնման ընթացքում որպես չափման միավոր օգտագործվել է «ամիս» բառը, իսկ որպես քանակ «12» թիվը՝ «դրամ» բառի և «1» թվի փոխարեն: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշման հավելված 3-ի 2-րդ բաժնի 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «…նշված դիտողությունը հածվի կառնվի հաջորդ ընթացակարգերի կազմակերպման ժամանակ, և գնման ընթացքում օգտագործվող չափի միավորը և քանակը կհամապատասխանեցվեն ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի թիվ 390-Ն որոշման պահանջներին:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրամադրվել է պարզաբանում:

6.1.5 Բացակայում են «Մեկ անձից գնում» ընթացակարգով գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը՝ մասնավորապես մասնակիցներին ուղարկված հրավերները: Առկա են անհամապատասխանություններ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ

մասի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «...նշված փաստաթղթի բացակայության առընչությամբ տեղեկացնում ենք, որ թատրոնի գործունեության բնույթից կախված՝ նման դեպքերում, ժամանակից առումով անհնար է հարցումներ կատարել և սպասել դրանց պատասխանին, քանի որ խոսքը վերաբերվում է ներկայացումների ընթացքը ապահովելու նպատակով հրատապ ձեռքբերվող ապրանքներին և ծառայություններին:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել, տրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

6.1.6 «Մեկ անձից գնում» ընթացակարգով ՕԲԹ-ՄԱԾՁԲ-ԳՊ-21/05, ՕԲԹ-ՄԱԾՁԲ-21/06, ՕԲԹ-ՄԱԾՁԲ-21/07, ծածկագրերով կատարված գնման ընթացքում ծառայությունները նախատեսված չեն եղել հրապարակված գնումների պլանով: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման 4-րդ բաժնի 16-րդ կետի պահանջների հետ:

6.1.7 «Մեկ անձից գնում» ընթացակարգով ՕԲԹ-ՄԱԾՁԲ-ԳՊ-21/02, ՕԲԹ-ՄԱԾՁԲ-ԳՊ-21/03, ՕԲԹ-ՄԱԾՁԲ-ԳՊ-21/04, ՕԲԹ-ՄԱԾՁԲ-ԳՊ-21/05, ՕԲԹ-ՄԱԾՁԲ-21/06, ՕԲԹ-ՄԱԾՁԲ-21/07 ՕԲԹ-ՄԱԱՊՁԲ-ԳՊ-21/01, ՕԲԹ-ՄԱԱՊՁԲ-ԳՊ-21/02, ՕԲԹ-ՄԱԱՊՁԲ-ԳՊ-21/03 ծածկագրով կատարված գնումների ընթացքում «Կնքված պայմանագրի մասին» հայտարարությունները չեն հրապարակվել Տեղեկագրում: Առկա է անհամապատասխանություն 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «6.1.6 և 6.1.7 ենթակետերի վերաբերյալ հայտնում ենք, որ թերության պատճառը գնումների մասնագետի կորոնավիրուսով վարակվելու հետևանքով առաջացած առողջական խնդիրներ են եղել:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտն առարկություն չի ներկայացրել, տրվել է բացատրություն:

6.1.8 «Մեկ անձից գնում» ընթացակարգով, ՕԲԹ-ՄԱԾՁԲ-ԳՊ-21/01 ծածկագրով կատարված գնման արդյունքում ծառայության դիմաց վճարումը (200.120 հազ. դրամ) կատարվել է (20.02.2021թ.) «Դրամով վճարվող

աշխատավարձեր և հավելավճարներ» (411000) խմբի «Այլ վարձատրություններ» (411500) սինթետիկ հաշվից: Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ. թիվ 5-ն հրամանի պահանջների հետ, որով հաստատված են ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «…նշված դիտողության վերաբերյալ հայտնում ենք, որ «Մեկ անձից գնում» ընթացակարգով, ՕԲԹ-ՄԱԾՁԲ-ԳՊ-21/01 ծածկագրով կատարված գնման արդյունքում ծառայության դիմաց վճարումը սխալմամբ «Տեղեկատվական ծառայություններ» (423400) հոդվածի փոխարեն ծախսը կատարվել է «Այլ վարձատրություններ» (411500) հոդվածով, որը մինչև 2021թ. ատարեվերջ կուղղենք՝ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն հոդվածային փոփոխություն կատարելու նպատակով:»

6.1.9 2021թ. երեք ամիսների Նախարարության Ծրագիր 3-ում փաստացի և դրամարկղային ծախսերի տարբերության (79,233.4 հազ. դրամ) և հաշվետու ժամանակաշրջանի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի եռամսյակային բացարձակ հաշվարկի (91,940.6 հազ. դրամ) միջև առկա է 12,707.2 հազ. դրամի անհամապատասխանություն:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «…«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամը 2020թ. տարեվերջի դեբիտորական պարտքը, տեխնիկական վրիպակի արդյունքում, մուտքագրել է 2020թ. ինն ամսվա ցուցանիշը՝ 19,637.6 հազար դրամը, մինչդեռ պետք է լիներ 6,930.4 հազար դրամ:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտը առարկություն չի ներկայացրել, տրամադրել է բացատրություն:

6.1.10 2021թ. երեք ամիսների Նախարարության Ծրագիր 4-ում ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան հաշվետվություններում ներկայացված և ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրված ոչ ֆինանսական, արդյունքային ցուցանիշների գծով ինչպես 2021թ. տարեկան, այնպես էլ հաշվետու ժամանակաշրջանի ամփոփ տվյալների միջև առկա են անհամապատասխանություններ (տես Աղյուսակ 6):

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. Արձագանքը բացակայում է

Աղյուսակ 6

Նախարարության և ԾՐԱԳՐԵՐ-ի 2021 թվականի երեք ամիսների ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(Ընդանիք)

Տեղեկատվության աղբյուրներ	Սուբսիդավորվող ընտանիքների, վարկառուների թիվը

	2021թ. տարեկան			2021թ. երեք ամիսներ		
	Պլան	Ճշտված պլան	*Տարբերություն (+,-)*	Պլան	Ճշտված պլան	*Տարբերություն (+,-)*
ՀՀ ֆինանսների նախարարության հաշվետվության շրջեմարան	6743	6443	**300**	1685	1585	**100**
ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրված	6235	5725	**510**	1558	1516	**42**
Տարբերություն (+,-)	**508**	**718**	**-210**	**127**	**69**	**58**

7. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

7.1 Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. երեք ամիսների հաշվեքննությամբ պարզվել է, որ.

7.1.1 Նախարարության Ծրագիր 1-ում հաշվետվությամբ տեղադրված (7760) և Նախարարության կողմից տրամադրված (6806) ուսանողական նպաստ ստացող սովորողների թվերի միջև առկա է թվաքանակների էական անհամապատասխանություն (954):

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

«Ծրագիր 1-ում հաշվետվությամբ տեղադրված 7760 թիվը դա տարեկան միջինացված թիվ է, որը եռամսյակը մեկ ճգրտվում է, քանի որ հստակ հնարավոր չէ կանխատեսել ամբողջ տարվա կտրվածքով ուսումնական հաստատությունում ուսանողների շարժը (ընդունելություն, ավարտ, հեռացում, վերականգնում, տեղափոխություն և այլն), իսկ Նախարարության կողմից տրամադրված 6806-ը՝ 2021 թվականի ապրիլի 1-ի դրությամբ ուսումնական հաստատություններում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով սովորողների փաստացի թիվն է, որի մեջ ներառված չեն 2021 թվականին ավարտողների, ինչպես նաև 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության և ապրիլի մեկից հետո ուսանողների շարժի տվյալները:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտը առարկություն չի ներկայացրել, տրամադրել է բացատրություն:

7.1.2 Նախարարության Ծրագիր 2-ում 2021թ. տարեկան և երեք ամիսների նպաստ ստացող սովորողների թիվը նախատեսվել է 22112 ուսանողներ, որից ուսանողական կրթաթոշակ է նախատեսվել տրամադրելու 15478 ուսանողներին: Ըստ 2021թ. երեք ամիսների փաստացի ցուցանիշների, փաստացի ուսանողական նպաստ են ստացել 20955 ուսանողներ (1157-ով պակաս կամ 5,2%), որոնցից փաստացի ուսանողական կրթաթոշակ են ստացել 12847 ուսանողներ (2631-ով պակաս կամ 17,0%):

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Ծրագիր 2-ում ուսանողական կրթաթոշակի տրամադրումը կարգավորվում է ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1330-Ն կարգի պահանջներին համապատասխան: Ըստ կարգի կրթաթոշակը տրամադրվում է ոչ բոլորին կառավարման խորհուրդների կողմից հաստատված ցանկերով, որով և պայմանավորված է հաստատված և փաստացի թվերի տարբերությունը»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտը առարկություն չի ներկայացրել, տրամադրել է պարզաբանում:

7.1.3 Նախարարության Ծրագիր 3-ի ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների և տրամադրված պետության կողմից լրիվ փոխհատուցմամբ սովորող ուսանողների թվաքանակի միջև առկա է 8169 (8989 - 820), իսկ պետության կողմից մասնակի փոխհատուցմամբ սովորող ուսանողների թվաքանակի դեպքում՝ 5771 (10003 - 4232) տարբերություն, ինչպես նաև Ծրագիր 3-ում ամփոփ ֆինանսական ցուցանիշների գծով բուհերից ստացված, ամփոփված և հաշվետվություններով ձևակերպված փոխհատուցումների գծով՝ 10,868,605.2 հազ. դրամ (12,702,603.8 - 1,833,998.6) տարբերություն:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Ծրագիր 3-ի գծով Հավելված 3-ով ամբողջական տեղեկատվությունը կներկայացվի կիսամյակի կտրվածքով:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտը առարկություն չի ներկայացրել, տրամադրվել է պարզաբանում:

7.1.4 Նախարարության 2021թ. երեք ամիսների Ծրագիր 3-ում ընդգրկված թվով 29 բուհերից թվով 7-ի («Երևանի Վ. Բրյուսով անվան պետական լեզվահասարակական համալսարան» հիմնադրամ, «Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիա» ՊՈԱԿ, «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամ, «Եվրոպական համալսարան» հիմնադրամ, «ՀՀ ԳԱԱ գիտական միջազգային կենտրոն» ՊՈԱԿ, «Հյուսիսային համալսարան» ՍՊԸ և «ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ) վերաբերյալ ուսանողական նպաստների տրամադրման մասին տեղեկատվությունը բացակայում է:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Նախարարության 2021թ. երեք ամիսների Ծրագիր 3-ում ընդգրկված թվով 29 բուհերից թվով 7-ի վերաբերյալ ուսանողական նպաստների տրամադրման մասին տեղեկատվությունը կներկայացվի կիսամյակի կտրվածքով:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտը առարկություն չի ներկայացրել, տրամադրել է բացատրություն: Նախարարության 2021թ. երեք ամիսների նշված ուղղությամբ հաշվեքննության առաջադրանքով սահմանված գործառույթներին անդրադարձ կկատարվի Նախարարության 2021թ. վեց ամիսների ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության ընթացքում:

7.1.5 Նախարարության Ծրագիր 6-ի գծով պահանջվող տեղեկատվությունը թերի է, բացակայում է 2021թ. հունվար ամսվա դրությամբ աշակերտների կոմպլեկտավորումները:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «2021թ. հունվար ամսվա դրությամբ աշակերտների կոմպլեկտավորումները չի ներկայացվել ժամանակի սղության և համապատասխան ձևաչափի բացակայության պատճառով: Առաջարկվում է ձևաչափը նախապես քննարկել Նախարարության հետ:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Հաշվեքննության օբյեկտը առարկություն չի ներկայացրել, տրամադրել է պարզաբանում:

7.1.6 Ծրագիր 8-ի գծով «Կ. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի մասով և Ծրագիր 9-ի գծով բացակայում է «Թ. Ալթունյանի անվան երգի-պարի պետական համույթ» ՊՈԱԿ-ների մասով տեղեկատվությունը համապատասխան հավելվածներում Նախարարության կողմից չեն տրամադրվել:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. «Ծրագիր 8-ի գծով Գրություն 2-ի համապատասխան հավելվածում «Կ. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի մասով և Ծրագիր 9-ի գծով «Թ. Ալթունյանի անվան երգի-պարի պետական համույթ» ՊՈԱԿ-ի մասով տեղեկատվությունը խտասկավառակի մեջ չի տեղավորվել: Ընտրված հաստատություններից պահանջվող փաստաթղթերի ցանկը ներկայացվելու է առանձին էլեկտրոնային ֆայլերով:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը. Նախարարության 2021թ. երեք ամիսների նշված ուղղություններով հաշվեքննության առաջադրանքով սահմանված գործառույթներին անդրադարձ կկատարվի Նախարարության 2021թ. վեց ամիսների ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության ընթացքում:

8. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Թիվ	Առաջարկություններ	*Ընդունելի է/ Ընդունելի չէ*	*Կատարված է/ Ընթացքում է*	<u>Հիմնավորումներ</u>
Անհամապատասխանությունների և այլ գրավոր տեղեկատվության վերացման առաջարկություններին վերաբերող մասով				
1	Ներդնել այնպիսի հսկողական համակարգեր, որոնք հնարավորություն կընձեռնեն առավել ամբողջական վերահսկել կնքված պայմանագրերի կետերի պահանջների ամբողջական կատարումը:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	*Նախարարությունը 2021թ. տարեկան դրամաշնորհների պայմանագրերը կնքելիս առաջարկության տարրերը կներառի բովանդակության մեջ և հավելվածներում:*
2	Վերահսկել ԾՐԱԳՐԵՐ-ում Նախարարությքն ենթակա կազմակերպությունների ճշտված պլանի և փաստացի արդյունքային, ոչ ֆինանսական ցուցանիշների տարբերություններով պայմանավորված դեբիտորական, կրեդիտորական պարտքերի շեղումները, ՊՈԱԿ-ներում եռամսյակային կտրվածքով սովորողների թվաքանակների և փոխանցված գումարները և ներկայացվող հաշվետվությունների արժանահավատությունը:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	
3	Ուշադրություն հրավիրել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված հիմնական միջոցների դուրսգրման հաշվապահական ձևակերպումների կատարման ժամկետների վրա:	«Ընդունված է»	«Կատարված է»	*Առաջարկությունը հաշվի է առնվել:*

4	Ուշադրություն հրավիրել դրամաշնորհների մրցութային գործընթացների ուշացումների, ենթակա հաստատությունների հաստիքացուցակներում ճշգրտումներ և ֆինանսավորման հայտերի ներկայացման ժամկետների վրա, ինչպես նաև կարգավորել «Խորեոգրաֆիայի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի հետ դրամաշնորհային պայմանագրի կնքման ձգձգման հարցը:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	*Նախարարությունը «Խորեոգրաֆիայի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի հետ դրամաշնորհի պայմանագիրը կկնքի հարուցված քրեական գործի շրջանակներում դատական պրոցեսի վերջնական որոշումից հետո:*

2021թ. երեք ամիսների հաշվեքննության ընթացքում արձանագրված թվով 13 անհամապատասխանություններից և այլ փաստերից Նախարարության կողմից ներկայացված առարկություններից թվով 3-ն ընդունվել է, թվով 1-ն ընդունվել է մասամբ, իսկ թվով 9-ի մասով տրամադրվել են պարզաբանումներ և բացատրություններ (Նախարարության 2021թ. հուլիսի 23-ի թիվ 01/172/16001-20 գրությունը կցվում է):

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվում է Նախարարությանը.

9.1 Առկա գործիքակազմերով սահմանել այնպիսի վերահսկողական մեխանիզմներ, որոնց կիրառմամբ կբացառվեն գնումների գործընթացները կանոնակարգող իրավական ակտերի պահանջների հետ հնարավոր անհամապատասխանությունները:

9.2 Հսկողություն սահմանել ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տեղեկատվության վրա, մասնավորապես՝ ժամկետների, ամբողջականության, լիարժեքության, պահանջված ձևաչափերին համապատասխանության և ճշգրտության առումներով:

9.3 Ներքին վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով միջոցառումներ ձեռնարկել Նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարաններ փոխանցվող տեղեկատվության ամփոփագրերի և ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տվյալների անալիտիկ և սինթետիկ մակարդակների ճշգրտության ապահովման վրա:

9.4 Միջոցառումներ ձեռնարկել և ՀՀ կառավարություն առաջարկություններ ներկայացնել Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի համար տարեկան ֆինանսավորումների համար բազային իրավական ակտեր ստեղծելու, նորմեր և գործակիցներ սահմանելու ուղղությամբ:

9.5 Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի

յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանումներ և միջոցառման կատարման ժամանակացույց: